ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2024թ. թիվ 945-Ա

Ռ.ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԱԼԱՎԵՐԴԻ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված կարգի 7-րդ կետով, հիմք ընդունելով մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ Վաղարշակ Եղիազարյանի 15.11.2024թ. զեկուցագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի տեղակալի օգնական Ռուբեն Սահակյանին ս/թ նոյեմբերի 18-ին մեկ օրով գործուղել ք.Ալավերդի՝ ՀՀ Լոռու մարզում տեղացած հորդառատ անձրևների հետևանքով տեղի ունեցած հեղեղումների առաջացրած արտակարգ իրավիճակից տուժած քաղաքացիներին տրված փոխհատուցման նպատակայնության մշտադիտարկում իրականացնելու համար:

2. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ ճանապարհածախսի:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ
2003720081

2024-11-15 17:59:18 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱՋԱՐՅԱՆ

2024թ. նոյեմբերի 15
ք.Վանաձոր